3971

3K7
F-38

Арм.
3-5304а
863/95

ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԵՌԱԿԱ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

3КП
f-38
30 JUN 2005
1 DEC 2009

# ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ՆԱՄԱԿ

## „ՄԱՐՔՍԻԶՄԻ—ԼԵՆԻՆԻԶՄԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ“ ԿՈՒՐՍԻ ՆԵՐԱԾԱԿԱՆ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՅԵՎ ՍԵՄԻՆԱՐ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ՊԼԱՆԻՆ

Հեռակա մանկավարժական ինստիտուտի
ավարտական կուրսերի համար

Инв. № 19375

Гос. Публичная Библиотека в Ленинграде

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԱզԲԽՍՀ ԼՈՒՍԺՈՂԿՈՄԱՏԻ
ԲԱԳՈՒ — 1939 Թ.

3971

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
I сс. Библиотека
ՀՍՍՀ-Арм.ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

4620-87

Сдано в набор 29/XI 1939 г.
Подписано к печати 19/XII 1939 г.
5/8 печ. лист. 29280 тип. знак.

Главлит № 8885. Заказ № 3022. Тираж 500.
Типография „Красный Восток“, Баку, улица Юного пионера, 84.

# ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ՆԱՄԱԿ

## „ՄԱՐՔՍԻԶՄԻ—ԼԵՆԻՆԻԶՄԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ ԿՈՒՐՍԻ ՆԵՐԱԾԱԿԱՆ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՅԵՎ ՍԵՄԻՆԱՐ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ“ ՊԼԱՆԻՆ

ՀԵՌԱԿԱ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԱՎԱՐՏԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐԻ ՀԱՄԱՐ

Թանկագին ընկեր______________________

*Այս բացատրական նամակի հետ ուղարկվում է Ձեզ մարքսիզմի—լենինիզմի կուրսի ներածական դասախոսությունների և սեմինար պարապմունքների պլանը ՀՄԻ ավարտական կուրսերի համար (ուսուցչական ինստիտուտի 5-րդ սեմեստրի և մանկավարժ. ինստիտուտի 7-ից 8-րդ սեմեստրի համար)։*

*1939—40 ուսումնական տարում դուք պետք է աշխատեք այդ պլանով։*

*ԽՍՀՄ ԺԿԽ կից Բարձրագույն դպրոցների կոմիտեյի վորոշմամբ բոլոր ԲՈՒՀ-երի ավարտական ուսանողները ուսումնասիրում են վոչ թե բոլոր սեմինար թեմաները, այլ ուղարկված պլանի սահմաններում, այսինքն կրճատված։ Այդ պլանը մյուս կուրսերին չի վերաբերում։*

*Այս ուսումնական տարում (1939—40) ավարտական ուսանողներն ամբողջ սեմինար կուրսից պետք է ուսումնասիրեն.*

*1. Լենինի «Մատերիալիզմ և էմպիրիոկրիտիցիզմ» գիրքը (Յերկերի լիակատար ժողովածույի 13-րդ հատոր, կամ առանձին գրքով)։*

*2. Ընկեր Ստալինի և ընկեր Մոլոտովի զեկուցումները ՀԿ(բ)Կ 18-րդ համագումարում և համագումարի նյու-*

թերը։ Համագումարի նյութերին են վերաբերում մեր կուսակցության ղեկավարների զեկուցումներն ու ճառերը 18-րդ համագումարում և համագումարի վորոշումները։

Պլանում ցույց են տրված ավարտական-հեռակայողի վոչ թե ինքնուրույն աշխատանքի ժամերը, այլ 1940 թվի ամառվա սեսիոն քննությունների ժամերը։ Ինքնուրույն աշխատանքի մասին ցուցմունք է տրվում այս մեթոդական նամակում։

Մեր ուսանողներից պահանջվում է ուժեղ, խոհուն, համառ աշխատանք «Մարքսիզմի-լենինիզմի հիմունքների» կուրսի նյութերի և աղբյուրների ուսումնասիրության ժամանակ։ Կուրսի յուրացման մեջ մաքսիմալ եֆեկտավորության համար հեռակայող-ավարտականներն ամբողջ ուսումնական տարվա ընթացքում պետք է սիստեմատիկորեն աշխատեն նյութերի վրա, ղեկավարվելով հետևյալ ցուցմունքներով.

1. Ավարտականները մինչև 1939—40 ուսումնական տարվա վերջը պետք է լրիվ ուսումնասիրեն Լենինի «Մատերիալիզմ և եմպիրիոկրիտիցիզմ» գիրքը, ընկեր Ստալինի և ընկեր Մոլոտովի զեկուցումները ՀԿ(բ)Կ 18-րդ համագումարում, համագումարի նյութերն ու վորոշումները, նույնպես յեվ «ՀԿ(բ)Կ պատմության համառոտ դասընթացի» 4-րդ յեվ 12-րդ գլուխները։ Դրա հետ միասին դուք պետք է հավաքեք, պահեք և ուսումնասիրեք պարբերական մամուլում լույս տեսած մեր կուրսին վերաբերվող հոդվածները, նույնպես և այն ուսումնա-օժանդակ նյութերը, վոր ուղարկում է ձեզ Հեռ. մանկ. ինստիտուտը։

2. Ուսումնասիրության ժամանակ ավարտականները պարտավոր են սիստեմատիկ կերպով կազմել կոնսպեկտներ։ Առանց կոնսպեկտներ կազմելու վոչ մի գիտական ուսումնասիրություն չի կարող լինել։ Ձեր կոնսպեկտները կստուգվեն 1940 թ. ամռանը—քննությունների ժամանակ։ Ուսում. տարվա ընթացքում կուրսի դասա-



տուները կարող են փոստով պահանջել ձեր կոնսպեկտներն ընթացիկ կոնտրոլի և մեթոդական ոգնություն ցույց տալու համար։ Դուք պարտավոր եք ուղարկել կոնսպեկտները։ Կոնսպեկտներն ստուգելուց հետո հետ կուղարկվեն դասատույի ցուցմունքների հետ միասին։

3. Աշխատանքի ժամանակ ծագած հարցերը, վորոնք պահանջում են լրացուցիչ բացատրություն,—հեռակայողը գրավոր կերպով ուղարկում է Հեռ. մանկ. ինստիտուտ (Բագու, Շահումյանի փողոց, 20) և դասատույից ստանում է գրավոր կոնսուլտացիա։ Ուսանողները պետք է դասատույի հետ սերտ կապ պահպանեն ինստիտուտի գրասենյակի միջոցով և ոգնության դիմեն ամեն ժամանակ։

4. Դասատուն ուսումնական տարվա ընթացքում կարող է այս կամ այն ուսանողից պահանջել գրավոր հաշվետվություն նրա ինքնուրույն ուսումնական աշխատանքի մասին և մեթոդական ցուցմունքներ տալ։

5. Ինստիտուտում կա Մարքսիզմի-լենինիզմի կաֆեդրա (ամբիոն) և կաբինետ։ Հեռակայողները կարող են ամեն ժամանակ գրավոր կամ անձամբ դիմել Մարքսիզմի-լենինիզմի կաֆեդրային կամ կաբինետին՝ նյութերի, ցուցմունքների և ամեն տեսակ ոգնության համար։

6. Փորձը ցույց է ավել, վոր հեռակայողների համար ամենադժվարը Լենինի «Մատերիալիզմ և եմպիրիոկրիտիցիզմ» գրքի և «ՀԿ(բ)Կ պատմության համառոտ դասընթացի» 4-րդ գլխի ուսումնասիրությունն է։ Այստեղ ամենից շատ է պահանջվում կայունություն և համառ աշխատանք։ Մարքսիզմի-լենինիզմի կաֆեդրան ուսանողներին միշտ սիստեմատիկ ոգնություն ցույց կտա։

7. Լենինի «Մատերիալիզմ և եմպիրիոկրիտիցիզմ» գրքի, նույնպես և «ՀԿ(բ)Կ պատմության համառոտ դասընթացի» 4-րդ գլխի ուսումնասիրությունն ավարտող ուսանողները պետք է վերջացնեն 1940 թ. փետրվարի վերջին։ Իսկ ընկեր Ստալինի և ընկեր Մոլոտովի զեկու-

ցումները ՀԿ(բ)Կ 18-րդ համագումարին և համագումարի վորոշումները՝ 1840 թ. մայիսի վերջին։

8. Ձեզնից յուրաքանչյուրն այս ուսումնական տարվա ընթացքում ինստիտուտին պետք է ներկայացնի մարքսիզմի-լենինիզմի հիմունքների կուրսից յերկու գրավոր կոնտրոլ աշխատանք։ Ստորև տրվում է գրավոր աշխատանքի համար հարցերի ցուցակ։

## Կոնտրոլ աշխատանքի հարցերի ցուցակը

1. Լենինի «Մատերիալիզմ և եմպիրիոկրիտիցիզմ»-ի յեվ «ՀԿ(բ)Կ պատմության համառոտ դասընթացի» 4-րդ գլխի նկատմամբ.

ա) Բերկլու փիլիսոփայության (սուբյեկտիվ իդեալիզմի) հիմնական գծերը (տես Լենինի գրքի ներածականը)։

բ) Մախիզմի եյությունը (տես Լենինի «Մատերիալիզմ և եմպիրիոկրիտիցիզմ» գրքի ներածականը և առաջին գլուխը)։

գ) Լենինի պայքարը ռուսական մախիստների (Բոգդանով, Բազարով, Լունաչարսկի և այլոց) դեմ ստոլիպինյան ռեակցիայի տարիներին (տես «ՀԿ(բ)Կ պատմության համառոտ դասընթացը)։

դ) Ի՞նչ է մատերիան։ Պլեխանովի «փորձ» հասկացողության նկատմամբ ունեցած սխալի քննադատությունը Լենինի կողմից։

ե) Եմպիրիոկրիտիցիզմը և պատմական մատերիալիզմը (Լենինի գրքի 6-րդ գլուխը)։

զ) «Սիմվոլների (կամ հիերոգլիֆների) թեորիան» և նրա քննադատությունը Լենինի կողմից։

2. Ընկեր Ստալինի և ընկեր Մոլոտովի զեկուցումների և համագումարի նյութերի ու վորոշումների նկատմամբ.

ա) Միջազգային դրությունն ըստ ընկեր Ստալինի զեկուցման ՀԿ(բ)Կ 18-րդ համագումարում, ընկեր Մոլոտովի զեկուցման ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի 4-րդ արտա-



հերթ սեսիայում, ընկեր Մոլոտովի 1939 թվի սեպտեմբերի 17-ի յելույթի, ընկեր Մոլոտովի զեկուցման՝ ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի 5-րդ արտահերթ սեսիայում 1939 թ. հոկտեմբերի 31-ին։

բ) 3-րդ հնգամյակի հիմնական տնտեսական պրոբլեմ

գ) Ընկեր Ստալինը մարքսիստական-լենինյան թեո-րիայի նշանակության մասին (տես նույնպես «ՀԿ(բ)Կ պատմության համառոտ դասընթացի» յեզրափակման 2-րդ կետը)։

դ) Ընկեր Ստալինը սոցիալիստական պետության մասին։

յե) Ընկեր Ստալինը խորհրդային ինտելիգենցիայի մասին. (տես նույնպես ընկեր Ստալինի զեկուցումը Սահմանադրության նախագծի մասին ԽՍՀՄ Խորհուրդների արտակարգ 8-րդ համագումարում)։ Այս ցուցակից դուք ընտրում եք միայն յերկու հարց ըստ ձեր հայեցողության. մեկը Լենինի «Մատերիալիզմ և եմպիրիոկրիտիցիզմ» գրքի համար, մյուսն՝ ընկեր Ստալինի զեկուցման համար։

10. Առաջին գրավոր կոնտրոլ աշխատանքը դուք պետք է ներկայացնեք 1940 թ. մարտի մեկին, իսկ յերկրորդը՝ 1940 թ. մայիսի մեկին։

11. Գրավոր աշխատանքներն ստուգելուց և ռեցենզիայից հետո հետ են ուղարկվում դասատուի պատասխանով և գնահատականով։

12. Այն ուսանողը, ով չի ներկայացնի գրավոր կոնտրոլ աշխատանք, ամառային քննություններին չի թույլատրվի։

Այս նամակը և ուսումնական պլանն ստանալուց հետո խնդրում ենք շտապ հայտնել ստանալու մասին։

ՀՄԻ Մարքսիզմի-լենինիզմի կաֆեդրա։

* * *

## Մարքսիզմի-լենինիզմի հիմունքների կուրսի սեմինար պարապմունքների ու սեմինարների համար ներածական դասախոսությունների պլանը

*(Դասախոսություն 8 ժամ, սեմինար 10 ժամ)*

1. Ներածական դասախոսություն Լենինի «Մատերիալիզմ և էմպիրիոկրիտիցիզմ» գրքի մասին . . . 4 ժամ.
   «Մատերիալիզմ և էմպիրիոկրիտիցիզմ» գրքի առթիվ սեմինար . . . . . . . . . . . . . 6 ժամ.
2. Ներածական դասախոսություն ընկեր Ստալինի զեկուցման առթիվ ՀԿ(բ)Կ 18-րդ համագումարում յեվ «ՀԿ(բ)Կ պատմության համառոտ դասընթացի» 12-րդ գլուխը . . . . . . . . 4 ժամ.
   Սեմինար ընկեր Ստալինի և ընկեր Մոլոտովի զեկուցումների առթիվ . . . . . . . . . . 4 ժամ.
3. Քննություններ։

* * *

### ՔԱՂՎԱԾՔ

*Բարձրագույն դպրոցի՝ ԽՍՀՄ ԺԿԽ կից Համամիութենական կոմիտեյի հրամանից, քննությունների կարգի մասին, 1939 թ. նոյեմբերի 31։*

Ավարտական ուսանողները, վորոնք անցյալ սեմեստրում լսել են «ՀԿ(բ)Կ պատմության համառոտ դասընթացի» լեկցիոն կուրսը և քննություն են տվել, քննություն են տալիս սեմինար յերկու թեմաներից.—

ա) «ՀԿ(բ)Կ պատմության համառոտ դասընթացի 4-րդ գլխից ու Լենինի «Մատերիալիզմ և էմպիրիոկրիտիցիզմ» գրքից և

բ) «ՀԿ(բ)Կ պատմության համառոտ դասընթացի» 12-րդ գլխից և ընկեր Ստալինի հաշվետու զեկուցումից կուսակցության 18-րդ համագումարում ՀԿ(բ)Կ ԿԿ աշխատանքների մասին և համագումարի նյութերից։



Այն ԲՈՒՀ-երում և ԲՏՈՒՀ-ների այն ֆակուլտետներում, վորտեղ կառավարությունը սահմանել է պետակա[ն] քննություններ, մտցնել պետական քննություն «Մարքսիզմ-լենինիզմի հիմունքներից» 1939/40 ուս. տարվա գարնանային քննությունների ժամանակ։

Սահմանել, վոր «Մարքսիզմ-լենինիզմի հիմունքների» պետքննությունների ժամանակ ուսանողից պետք է պահանջվի իմանալ «ՀԿ(բ)Կ պատմության համառոտ դասընթացը» և Մարքսիզմ-լենինիզմի հետևյալ սկզբնաղբյուրները.

1. Կ. Մարքս և Ֆ. Էնգելս.—«Կոմունիստական կուսակցության մանիֆեստը».
2. Վ. Ի. Լենին.—«Ինչ անել».
3. Վ. Ի. Լենին.—«Մի քայլ առաջ, յերկու քայլ հետ».
4. Վ. Ի. Լենին. — «Սոցիալ-դեմոկրատիայի յերկու տակտիկան դեմոկրատական հեղափոխության մեջ».
5. Վ. Ի. Լենին.—«Մատերիալիզմ և էմպիրիոկրիտիցիզմ».
6. Վ. Ի. Լենին։—«Պատմություն և հեղափոխություն».
7. Ի. Վ. Ստալին.—«Մարքսիզմն ու ազգային հարցը».
8. Ի. Վ. Ստալին.—«Հոկտեմբերյան հեղափոխությունը և ռուսական կոմունիստների տակտիկան».
9. Ի. Վ. Ստալին.—«Լենինիզմի հիմունքների մասին».
10. Ի. Վ. Ստալին.—«Հաշվետու զեկուցում կուսակցության 18-րդ համագումարում ՀԿ(բ)Կ ԿԿ աշխատանքի մասին»։

### ԼՐԱՑՈՒՑԻՉ

Լ. Պ. Բերիա.—«Անդրկովկասի Բոլշևիկյան կազմակերպությունների պատմության հարցի շուրջը»։

Ստորագրեց ԽՍՀՄ ԺԿԽ կից ԲԴՀԿ
նախագահ՝ Ս. Կաֆտանով

Ճիշտ է՝ Պանոմորյովա

Մեթոդական նամակը կազմեց
և խմբագրեց՝ Գ. Սիմոնյան

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՀ-Арм.ССР
им. А. Мясникяна

2558
Арм.
3-5304

АЗЕРБАЙДЖАНСКИЙ ЗАОЧНЫЙ ПЕДАГОГИЧЕСКИЙ ИНСТИТУТ

# ОБ'ЯСНИТЕЛЬНАЯ ЗАПИСКА

По плану вводных лекций и семинарских занятий по курсу „Основы марксизма-ленинизма“

для выпускных курсов ЗПИ.

Издание Наркомпроса АзССР
Баку—1939 г.

Ц. 1940 г.
Акт № 117
Вкладн. л.

ՀՀ Ազգային գրադարան
NL0178736

Н Арм
3-5304а